Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կարիքների համար ինսուլին լիզպրո 100 ՄՄ/մլ և ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) 100 ՄՄ/մլ դեղերի գնման 2015-2019 թվականների գործընթացը կազմակերպելու մասին» N 792-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները՝

1) որոշման վերնագիրը «2015-2019 թվականների» բառերից հետո լրացնել «և ինսուլին գլարգին 100 ՄՄ/մլ դեղի գնման 2017-2019 թվականների» բառերով.

2) որոշման 1-ին կետում, 2-րդ կետի 1-ին ու 2-րդ ենթակետերում և N 2 հավելվածի վերնագրում «ինսուլին լիզպրո 100 ՄՄ/մլ և ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) 100 ՄՄ/մլ» բառերը փոխարինել «ինսուլին լիզպրո 100 ՄՄ/մլ, ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) 100 ՄՄ/մլ և ինսուլին գլարգին 100 ՄՄ/մլ» բառերով.

3) որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

4) որոշման N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետով.

«

3.	Ինսուլին գլարգին 100 ՄՄ/մլ	փամփուշտ	9.5

»:

2. Սահմանել, որ «ինսուլին գլարգին 100 ՄՄ/մլ» դեղը ձեռք կբերվի 2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում կատարել համապատասխան փոփոխություններ 2015 թվականի օգոստոսի 18-ին կնքված «ՀՀ ԱՆ ԲԸԱՀԱՊՁԲ-2015/3-1» ծածկագրով Ինսուլինի մատակարարման պետական գնման մասին պայմանագրում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: